

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գիտութիւնք, թիւ 4, յունուարի
— Մենք նկատել էինք (1904, 11)
այդ հանդիսի մի քանի թերութիւն-
ները. այժմ, ինչպէս կարգուենք այդ
թուով՝ «Գիտութեան» ընթերցող-
ներէից ոմանք նոյն առարկութիւն-
ներ են անում խմբագրութեան, յայտ-
նելով որ իրանց հասկացողութիւ-
նից վեր են այդ հանդիսի նիւթերը ի-
րանց բովանդակութեամբ և լեզուով:
Մտազրուութիւնք խոստանում է յօդ-
ուածները ժողովրդականացման վրայ
աւելի մեծ ուշադրութիւն դարձնել:
«Նրբ ժամանակը դայ, աւելացնում է
խմբագիրը, Գիտութիւնք պիտի սկսի
գիտական այլ և այլ ճիւղերուն վրայ
ժողովրդական դասագրքերու հրա-
տարակութեանց շարք մը: Մենք ա-
սել էինք. «Վատ չէր լինի եթէ ին-
տելիգենա ընթերցողները համար
զրուածքները կողքին գրուէր նաև
ընական գիտութիւնների սխտեմա-
տիկական դասընթացների մի շարք,
զրուած տարրական պատրաստու-
թիւն ունեցողների համար: Այդ
կերպ էին ժողովրդականացնում բը-
նական գիտութիւնը Անգլիայի ա-
մենահռչակատու գիտականները:—
Ուրեմն, այդ մեր պահանջն էլ ար-
դարացի է գտնում «Գիտութեան»
խմբագրութիւնը: Շատ ուրախ ենք:
Յիշած թուի բովանդակութիւնը
հետեւեալն է. Ժ. Ժամբուրճ՝ գիտութիւն
և բանաստեղծութիւն. Է. Նունկ՝
Ռատիոսը և կեանքը. Ուզունեան՝
Էլեբարարբուսութիւնը. Գ. Բայա-
սեան՝ կեանք և վանդակիկներ. Ման-
կավարժական, գիտական լուրեր, օգ-
տակար գիտելիքներ:

Մտազրուութիւնը խոստանում է
յաջորդ թուով բանալ և գիւղատնտե-
սական բաժին:

«Նաղիկ», № թիւ 12.— «Մորհր-
դածութիւններ օրուան գրական
կեանքին վրայ» յօդուածում, օգ-
տուելով «Բիւզանդիոնի» տարեկան
տեսութիւնից՝ թրքահայ գրականու-
թեան վրայ, ահա թէ ինչ գրական հա-
շուեկշիռ է անուամբ սպուած է մի տա-
րուայ ընթացքում, բաց առած զըզ-
րոցական և դասական աշխատութե-
րութիւնները, 11 գիրք, որոնցից 5
հատ կրօնական, 2 հատ բանաստեղ-
ծութիւն, 1 հատ ժողովրդականաց-
րած կէս-բժշկական, 1 հաւաքածու,
և 1 թատերական: Վերջոյ իշխալ 11
հատորներից եթէ հանենք երկու
թարգմանութիւն և մէկ հաւաքա-
ծու, կ'ունենանք ինքնագիր ութ
հատոր:

Գարբերական հրատարակու-
թիւնների մէջ անցեալ տարուայ
ընթացքում ուշադրաւ են համարում
միայն—Յով. Գազանճեանի «Նւղ-
կիացի հայ կիներ» տ. Ծայանի «Վէ-
պը», Զիֆթէ-Մարաֆի՝ «Միամիտի
մը արկածները և «Գոլտական տե-
սարանները»:

«Նրդի Գոլտահայ լրագրութիւնը»
— իր դիրքը, դերը և ընթացքը յօ-
դուածում, որ սկսուել է նախորդ
համարում և դեռ չի վերջանում, Ծ-
նովք Արմէն այնքան էլ պատուաբեր
զոյներով չէ ներկայացնում մեր
թիւրքահայ օրագրութեան ներքին
կազմը: Նոյն հարցերի շուրջ են պը-
տտում, սակայն այլ տեսակէտից,

Արամ Անտոնեանի «Օրումն գրականութիւնը»։ Դուքս է զալիս, որ թերթերի շատանալու հետ չեն անկացել Գոյում գրական ոյժերը, ուստի թերթերը զգոնէ լեցունելու համար դիմում են գանարժան» և «տաղանդազորիչ սկսնակներին»։ Լըրադրապետները իրանց շահերի զոհողութիւն յանձն չառնելով գերադասում են ձրի աշխատակիցներ ունենալ։ «Այդ ինքնակ աշխատակիցներու խումբին մէջ,—որուն պէտք է կցել նաև զաւուսային թղթակիցներու մեծամասնութիւնը,—լրագրապետին տեսակէտով ամենէն թանկագինները անոնք են, որոնք հրապարակախօսութիւն կ'ընեն, այսինքն թաղային խնդիրներ կը յուղեն, զաւուսային առաջնորդները կը ձաղկեն, հանրային պաշտօնէութիւնները կը քննադատեն, ազդի հաստատութեան վարչութիւնը կը խճճեն, հանրային անհատներու զործունէութիւնը կը դնահատեն և այլն»։ Յօդուածագիրը՝ թիւրքահայ լրագրական ընկած դրութեան պատճառները քննելիս՝ մեզ թուում է թէ նմանում է այն դիտողին, որ ծառերի լետից անտառը չի տեսնում... Ամենամեծ պատճառը սոսկալի բեժիմըն է, որ սպանում է ամեն մի կենդանութիւն, ազատ զարգացում, իսկ թուած պատճառները հետևանքներ են այդ զլլատուր անորմալ պայանի...

«Մասիս», թ. 1, 2.—Մի քանի ժամանակով դադարած այդ հանդէսը կրկին սկսեց հրատարակուել։ Այդ համարներում տպուած են հետևեալ յօդուածները.

Ռ. Յ. Գէրպէրեան՝ դովում է, Ընթերցումը, օգտակար գրքերի ընթերցումը և նրա կատարած մեծ դերը ընթերցողի վրայ, երբ կրթիչ հրահանգիչ է և չի պարունակում անտոի ու փուռ շատախօսութիւններ. և սպա, մէջ բերելով նշանաւոր հեղինակների խօսքերն ու կարծիք-

ները ընթերցանութեան բազմակողմանի օգուտներէ վրայ, եղբակացում է, թէ ամեն ժողովուրդ և բախտագիտական պարտք ունի դէպի իր գրական մշակներն և աշխատաւորներն։ Խմբագրութիւնը՝ Հիցէն ու Յորէն յօդուածում այլ և այլ խնդիրներ է յուղում. խօսում է պարահանդէսների և նրանց իբր բարեգործական ձեռնարկներ՝ ունեցած ազդեցութեան վրայ, Եղմիրեանց գրական մրցանակաբաշխութեան և նորընտր առաջնորդների վրայ—Առ հասարակ բոլոր թրքահայ գրականութեան վրայ երևում է մի սպանիչ սեժիմի մեղքընող ազդեցութիւնը. խեղճերը բացի կրօնական, առևտրական, զուտ գրական» և արտասահմանեան և տիրացուական—գաղութական հարցերից, այլ բաների մասին գրելու իրաւունք չունին. բուն կեանքը, բուն թրքահայ իրականութիւնը իրանթիւ ցաւերով գրաքննչական եօթ կողպէքներով է փակուած։ Եւ այդ բեժիմին միթէ վերջ չպէտք է լինի...

Հարիզոն.—Ստացանք Եգիպտոսից և այս նորածին շարթաթերթի առաջին երկու համարները, որոնցից երևում է, որ «Հորիզոնի» վարիչները «գրականութիւն» անելու յաւակնութեամբ չեն իջել հրապարակ «Հորիզոնը» մի պարզ կուռի օրգան է, որ Եգիպտոսի նման ազայական հողի վրայ կարող է հասարակական մաքրագործողի մեծ դեր կատարել, եթէ միայն յարատեւէ։

Անահիտ.—Իր յունուարի համարի առաջնորդում «Կայծ» մը վերագրի տակ խօսում է Մրիկ-ի «Փանդատ» բանաստեղծութեան մասին, որը նկատում է ազատ մտածումի, ըմբատ ոգիի միակ կայծը բացառապէս կրօնական, միստիքական և աստուածաբանական շունչով գրուած առաքեալների և ս. հայրերի ազդեցութեամբ ձևուած մեր նախկին,

ամբողջ մատենագրութեան մէջ: Առաջ է բերուած «Գտնադատը» աշխարհարար թարգմանութեամբ հանդերձ:

CORRESPONDANT. (մարտի 10).

Ա. Շէրազամ կարծում է, որ ուսու-ճագոնական ընդհարման իսկական նկարագիրը ճանաչելու համար, պէտք է գիտենալ, թէ ի՞նչ է Գերմանիայի քաղաքականութիւնը Հեռուոր-Արևելքում: Նա է, որ Ռուսաստանին մղեց դէպի Հեռուոր-Արևելք և 1895-ից ի վեր նրան մղեց ընդունել մի արագ ու բուռն քաղաքականութիւն, որը բոլորովին հակասում էր Ռուսաստանի մինչև այն ժամանակ Ասիայում գործադրած ձկուն ու ճարպիկ քաղաքականութեան: Եթէ նկատի առնենք Կուլիշայի և դրան հետևող հարցերը, կը դանք այն եզրակացութեան, որ 1897-ին Գերմանիան իրականացրեց այս երկու նպատակները. ինքն անձամբ հաստատուել չինական ափերում և Ռուսաստանը ամբողջապէս քաշել դէպի Հեռուոր-Արևելք:

NOUVELLE REVUE. — (մարտի 15).

ժողով Ռիբէ՛ «Արծուի թռիչքը» վերնազրի տակ մի յօդուածով ցոյց է տալիս Միացեալ Նահանգների վարչացումը Մոնրօէից սկսած մինչև Ռուզվելտ: Յօդուածագիրը յիշեցնում է, որ Վաշինգտոնի վարչապետութիւնն էր՝ աշխարհակալութիւնների հետևից չվազել, փառասիրական յիմարութիւնների չդոնել ազատազրուած Միացեալ-Նահանգների ոյծերը, և այդ պատճառով էլ նա քարոզեց, որ Ամերիկան չպէտք է միջամտէ Եւրոպայի գործերում: Մոնրօէի վարչապետութիւնը, որ աւելի էր ուժեղացնում Վաշինգտոնին, զօրեղների ձեռքում մի վահան դարձաւ, և ո՛չ թէ ակաբների համար պաշտպանութեան մի ղէնք: Մոնրօէ քարոզում էր, որ Եւրոպան իրաւունք չունի միջամտելու Ամե-

րիկայում, ամերիկեան գործերում: Ահա ինչպէս այս վարչապետութիւնը դարձաւ մի վահան, արդէն հզօրացած Մ.-Նահանգների համար: Եւ շնորհիւ այդ վարչապետութեան է,—որից ծընունդ առաւ և եանկի իմպերեալիզմը, այսինքն աշխարհակալական քաղաքականութիւնը,—որ Միացեալ-Նահանգները դարձան աշխարհի տընտեսական առաջին ուժը: Անգլիան կանգնած է այլևս երկրորդ կարգում: Ամերիկան քարածուխի, մետաղաձուլի (fonte), պողպատի արդիւնաբերութեան կողմից Անգլիային արդէն գերազանցած՝ լուրջ կերպով սպառնում է գերազանցել նաև հիւսուածեղէն և բրդեղէն արտադրութիւնների կողմից: Մետաքսի արդիւնաբերական ճիւղում Ֆրանսիան դեռ ևս ամենքի գլուխն է, թէպէտև Մ.-Նահանգները տարէց տարի մօտենում են նրան: Բայց մասաւանդ հիւսուածեղէնի արտադրութիւնների կողմից է որ վտանգը հետզհետէ մօտալուտ է դառնում: Միացեալ-Նահանգներում, ոտոյնների (broche) թիւ 22 օ/0 աճում է, մինչդեռ Եւրոպայում 10 օ/0: Սէն-Լուիի վերջին ցուցահանդէսը, որ 5,000,000 քառակուսի մետր տարածութիւն էր զբաղում և 250 միլիոնի արժողութիւն ունէր, որ կրկնապատիկ մեծ էր, քան Չիկագոյի ցուցահանդէսը և քառապատիկ մեծ՝ քան Պարիզինը, հիացմունք, զարմացք պատճառեց ամբողջ աշխարհին:

REVUE DES DEUX MONDES.—

(Մարտ 15) Ժ. Բուրդո խօսում է քաղաքական գործադուհների մասին: Միզնէյ Ուէք, Տրադ-Ինիսուիստների պատմաբանը ընդհանուր գործադուլը նկատում է բանւորական շարժման տենդային, բուն բնուէն ծընունած մի յղացում: Բելգիական բանւորների ընդհանուր գործադուլը, որ տեղի ունեցաւ 1893-ին և տևեց միայն մի օր, ստիպեց բելգիական խորհրդարանը վերջ դնել ընտրոգա-

կան ախրող ուժերին. մի նոր ընդհանուր գործադուլի սպառնանքը բաւական եղաւ տապալելու Վանդէն Գէներ Բօօմի նախարարութիւնը: Բայց 1902-ին, 350,000 բանուոր՝ յարած լինելով ընկերվարականներէ կոչին հետեեալ պրոպագանդ. «Մի մարդ, մի քուէ», խորհրդարանը ընտրողական սխառմի վերաքննութիւնը չընդունեց: Բելգիայի բանուորական կուսակցութիւնը այդ պարտութիւնից դեռ եւ չէ վերականգնել: 1902-ին Բարցելոնայում տեղի ունեցած գործադուլը աւտոմոմիստների (նահանգական կատարեալ ինքնավարութիւն պահանջողներէ) և անլիշտանականների գործն եղաւ Գործադուլը արժանի էր ընդհանուր անունը կրելու: Գործատու անողները ջուրը, գաղը, հեռագրական և հեռախօսական թելերը կտրեցին, թալանեցին հացագործների փունները, մառանները, հացահատիկի ամբարները, ուտելիղէնի խանութները, հացի և մսի պաշար հայթհայթումը արգելեցին: Ընկերվարականները չէին մասնակցում գործադուլին: Ստոկհոլմի գործադուլը մի պարզ ցոյցի ընաւորութիւն կրեց արտայայտելու համար աշխատաւորների կամքը՝ ընդհանուր քուէարկութիւն ձեռք բերել: 120,000 գործաւոր խաղաղ ցոյցեր կազմակերպեցին և երեք չորս օր քաղաքի տէրերը դարձան: Մայրաքաղաքը լրագրներից և համարեալ լոյսից զրկուեց: Օրէնսդիր խորհրդարանը՝ այն ժամանակ յայտարարեց, որ կառավարութեան ներկայացրած ծրագիրը անբաւարար էր: Ո՛չ մի գործադուլ այնքան մեծ չափեր չէ ստացել և կէտ առ կէտ չէ գործադուրուել, որքան 1904 սեպտ. 16-ի իտալական գործադուլը: Այդ գործադուլին աւելի էր առուել Սարդիներայում, Բուշերիա քաղաքի մէջ զօրքի և բանուորների միջև տեղի ունեցած ընդհարումը. բայց նրա գլխաւոր նպատակն էր Ջիօլիատիի նախարարութեան տապալումը: Ամեն

տեղ հասարակական կեանքը դադար առաւ: Ո՛չ գաղ, ոչ էլէքտրականութիւն, ոչ ձիաքարը, ոչ երկաթուղի, ոչ պոստ: Կանայք և երեխաները երկաթուղու գծերի վրայ պտակում էին գնացքի մեկնումն արգելելու համար: Ստիպում էին բոլոր մագաղինները, նոյնիսկ դեղարանները փակել: Վենետիկում հիւանդանոցի հիւանդներէ յատկացրած կաթը զըցում էին ջրանցքում: Ջենովայի փողոցներում մեծ չափերով սպանութիւններ էին կատարում: Այն բոլոր քաղաքները, ուր գործադուլը չէր ժամ առեց, ընկերվարականներէց երես դարձրին, եղբակցնում է յօգուածագիրը:

EVERYBODY'S MAGAZINE. (մարտ). — Նիւ-Յօրքի այս հանդիսում տըպուած մի յօդուած հաւաստում է, որ աւելարսիի ամեցամեծ արքայ է (American Beef trust), Նա գրաւել է իր ձեռքի մէջ է առել Միացեալ-Նահանգների բոլոր հրապարակները: Նա հիմնուել է այն բողէից սկսած, երբ հնարուել են «ցուրտ վազոնները», որոնք այժմ շրջում են թուով 54,000: Beef trust-ը միայն իր համար նրանցից 42,000 հատ ունի: Այդ հսկայ ընկերակցութիւնը կազմուած է 1880 թ.: Նրա հիմնադիրները եղան Նէլսոն Մորրիս՝ առաւարի թագաւորը՝ Ջիլպազում և մի մագործ՝ Գիւստաւ Սուիֆտ: Այս վերջինը միտք յղացաւ մսի փոխադրութեան գործում կիրարկել ցրտացուցիչ սխտեմը, և հիմքը դրեց հսկայ trust-ին: Նրանց երկուսը միացան և ապա իրանց մէջ մացրին Արմուր և Համոնդ կոնսերվի և մտեղէն վաճառքների վիթխարի առևտրական անները: Այս չորս խմբերը յաջորդաբար նուաճեցին ամերիկական ոչ միայն տաւար, այլ և պտուղ արդիւնաբերող բոլոր կենդանիները: Մ.-Նահանգների ոչ մի նահանգ չէ կարողանում ազատուել նրանց ճանկերից: Տըբուսի դեղին կառքերը,

որոնց ամերիկացիները տալիս են «վաճառականութեան աւազակներ» անունը՝ երթեկեկում են երկաթուղային բոլոր գծերի վրայ և ճզմում են ամեն մրցութիւն:

տետրակում շարունակում է «Անիի կործանում» պատմական վէպը, որի միայն Ա. մասն է վերջացրել պ. Բագրատ Այվազեանցը: Ապա շարունակ է «կանոնք ձեռնադրութեան» և դրա կողքին .. «Լուսիկ Միշէլ»-ին նուիրում մի յօդուած: Պօէզիան ներկայացում է մի քարգմանական ոտանաւորով. «Նորին կայսերական բարձրութեան G. P.-ի (?) բանաստեղծութիւններէց»: Ահա ամբողջ բովանդակութիւնը այդ «գրական դիտական» ամսաթերթի:...

«Քամուտէր» 11—12. — Արդէն ապրիլ ամիսն է, իսկ պ. Կ. Պասմաճեանի «Բանասէրի» 1904 թ. նոյեմբ. և դեկտեմբ. ամիսների համարները նոր են լոյս տեսնում, այն էլ միացած մի թուի մէջ: Այդ լղարիկ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ լինողում է յօդուածագրերից՝ դրել պարզ, մանաւանդ թուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ, առանձնապէս ուշ դարձնել կէտադրութեան, ուղղագրութեան և նոր պարբերութիւնները որոշակի լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև ընագիրը:
2. Չընդունում մեծ յօդուածները պահում են խմբագրութեանը Յ ամիս, իսկ յետոյ ոչնչացում են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերադարձնում:
3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարում են անվճարելի:
4. Խմբագրութիւնն իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուրճի» համարը չստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:
6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրոջ կամ պոստային բլանկ:
7. Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպ. Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի խմբագրատանը իւրաքանչիւր ամսի 10-ից ուշ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: